

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը հաստատվում է Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից և սահմանում է Հանձնաժողովի լիազորությունները, աշխատանքի կազմակերպումը և գործունեության ընթացակարգը:

1.2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է՝ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին՝ ՀՀ օրենքով, Երևան քաղաքի ավագանու կանոնակարգով, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

1.3. Հանձնաժողովն ունի հետևյալ կազմը.

- ա) Հանձնաժողովի նախագահ.
- բ) Հանձնաժողովի նախագահի տեղակալ.
- գ) Հանձնաժողովի անդամներ:

1.4. Հանձնաժողովը Երևան քաղաքի ավագանու մարմին է, որի կազմը հաստատվում է քաղաքապետի կողմից:

2. Հանձնաժողովի լիազորությունները՝

2.1. Հանձնաժողովն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

ա) Ավագանու, քաղաքապետի, քաղաքապետարանի աշխատակազմի իրավական ակտերի ուսումնասիրություն և գործող օրենսդրությանը դրանց համապատասխանեցում.

բ) Երևանին վերաբերող օրենսդրական նախաձեռնությունների նախագծերի առաջադրում, ինչպես նաև շրջանառության մեջ դրված օրենսդրական նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

գ) հասարակական կարգի պահպանում:

3. Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը

3.1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի հերթական նիստերը նստաշրջանների ընթացքում հրավիրվում են ամիսը առնվազը մեկ անգամ՝ հանձնաժողովի սահմանած օրերին և ժամերին, իսկ նստաշրջանների միջակայքում՝ ըստ անհրաժեշտության:

3.2. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:

3.3. Հանձնաժողովի արտահերթ նիստը գումարվում է Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ նախաձեռնողների սահմանված ժամկետում և օրակարգով: Արտահերթ նիստի օրակարգը չի հաստատվում:

3.4. Հանձնաժողովի հերթական նիստը սկսվում է օրակարգի հաստատումով: Օրակարգի հաստատումից հետո հանձնաժողովի հերթական նիստում հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

ա) Հանձնաժողովի հերթական նիստը վարողը ըստ օրակարգի ներկայացնում է քննարկվող հարցը և դրա վերաբերյալ հիմնական ու հարակից զեկուցողներին.

բ) հիմնական զեկուցողի ելույթը.

գ) հարցեր հիմնական զեկուցողին.

դ) հարակից զեկուցողի ելույթը.

ե) հարցեր հարակից զեկուցողին.

զ) մտքերի փոխանակություն.

է) նիստը վարողի եզրափակիչ ելույթը.

ը) քվեարկություն:

3.5. Հանձնաժողովն իր կազմից որոշում է Երևան քաղաքի ավագանու նիստում հարակից զեկուցողին:

3.6. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե որոշմանը կողմ են քվեարկել Հանձնաժողովի նիստին ներկա անդամների մեծամասնությունը, բայց ոչ պակաս քան հանձնաժողովի անդամների մեկ քառորդը: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

3.7. Հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել նաև Երևանի քաղաքապետը կամ նրա առաջին տեղակալը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Հանձնաժողովի նիստին կարող է մասնակցել նաև նախաձեռնության հեղինակ ավագանու անդամը (անդամները):

3.8. Նիստերն արձանագրվում են Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ ներկա անդամներից որևէ մեկի կողմից: Նիստի արձանագրությունը, որը ներառում է նաև Հանձնաժողովի նիստում քննարկված բոլոր հարցերի քվեարկությունների արդյունքներն ու Հանձնաժողովի եզրակացությունը՝ ստորագրում է Հանձնաժողովի նախագահը:

3.9. Հանձնաժողովը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աջակցությամբ կազմակերպում է Հանձնաժողովի կազմակերպչական, փաստաթղթային, տեղեկատվական, վերլուծական և մասնագիտական գործունեությունը:

3.10. Հանձնաժողովն իր կազմից կարող է ձևավորել աշխատանքային խումբ՝ սահմանելով նրա խնդիրները, գործունեության ժամկետներն ու կարգը՝ ընտրելով նրա ղեկավարին: Աշխատանքային խմբի կազմում կարող են ընդգրկվել նաև խմբակցության փորձագետներ: Աշխատանքային խմբի գործունեությունը համակարգում է Հանձնաժողովի նախագահը: Իր գործունեության արդյունքների մասին աշխատանքային խումբը սահմանված ժամկետում զեկուցում է Հանձնաժողովի նիստում:

3.11. Հանձնաժողովն իր նիստին կարող է հրավիրել քննարկվող հարցին առնչվող Քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, Երևանի ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին, ինչպես նաև Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

3.12. Քաղաքապետը, Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, վարչական շրջանների ղեկավարները, Երևանի ենթակայության կազմակերպությունների ղեկավարները Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով պարտավոր են Հանձնաժողովին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկանքներ, բացառությամբ՝ Օրենսդրությամբ նախատեսված գաղտնիք համարվող տեղեկությունների:

3.13. Ընդունում է որոշումներ բաց քվեարկության միջոցով:

3.14. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են և հրապարակային: Հանձնաժողովի նիստերը ձայնագրվում են և արխիվացվում:

4. Հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը

4.1. Հանձնաժողովի նախագահը.

ա) նախապատրաստում և վարում է Հանձնաժողովի նիստերը,

բ) իր կամ Հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ հրավիրում է արտահերթ նիստ՝ նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:

գ) կազմակերպում է Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման աշխատանքները՝ դրանք ուսումնասիրության և եզրակացություն տալու համար նախնական ծանուցմամբ Հանձնաժողովի անդամներին ուղարկելու միջոցով:

դ) Հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի հետ միասին ամփոփում է Հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացված եզրակացությունները, որից հետո դրանք ներկայացնում է Հանձնաժողովի քննարկմանը,

ե) իրականացնում է Հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքների նկատմամբ հսկողությունը,

զ) ստորագրում է Հանձնաժողովի կողմից ընդունված փաստաթղթերը,

է) Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում Հանձնաժողովի հերթական նիստի օրակարգի նախագիծը.

ը) ներկայացնում է Հանձնաժողովն այլ անձանց հետ հարաբերություններում.

թ) հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում ստացված դիմում-բողոքները և Հանձնաժողովի ընդունած որոշման համաձայն՝ ընթացք տալիս դրանց.

ժ) համակարգում է հանձնաժողովի աշխատանքները մյուս հանձնաժողովների և քաղաքապետարանի աշխատակազմի հետ.

ժա) համակարգում է աշխատանքային խմբի աշխատանքը.

ժբ) Իրականացնում է օրենքով, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

4.2. Հանձնաժողովի նախագահի տեղակալը Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ նրա պաշտոնը թափուր լինելու դեպքում իրականացնում է Հանձնաժողովի նախագահի գործառույթները:

5. Հանձնաժողովի անդամը

5.1. Հանձնաժողովի անդամը.

- ա) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին.
- բ) մասնակցում է Հանձնաժողովի կողմից կազմակերպված քվեարկություններին.
- գ) ծանոթանում է Հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.
- դ) ուսումնասիրում է և կարող է հատուկ կարծիք ներկայացնել ենթակա փաստաթղթերի վերաբերյալ.
- ե) հանդես է գալիս առաջարկություններով և նախաձեռնություններով.
- զ) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, Երևան քաղաքի ավագանու կանոնակարգով, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

Հանձնաժողովի նախագահ՝

Ե. Ազարյան